# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 11/276-Հ

«02» 12 2022 թ. գ. Երևան

## ՏԱԹԵՎԻԿ ԱՐՍԵՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 31-Ղ2-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի եզրակացությունը և Տաթևիկ Սարուխանյանի դիմումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 151-րդ կետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տաթևիկ Արսենի Սարուխանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 31-Ղ2-2) պաշտոնին:

2. Տաթևիկ Սարուխանյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ